



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



«25» 06 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000047

Ձեռնարկողը՝

«Նոյ Լենդ» ՓԲԸ

Ք. Երևան, Ոլնեցու 15 ա

Գործունեությունը՝

**Չկալովկա համայնքի ափամերձ հանգստի գոյու
տարածքում հյուրանոցի և խոհանոցային մասնաշենքի
կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

«Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000047

«25» 06 2019թ.

**Չկալովկա համայնքի ափամերձ հանգստի գոտու տարածքում
հյուրանոցի և խոհանոցային մասնաշենքի կառուցման շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	«Նոյ Լենդ» ՓԲԸ
Նախագծող՝	«Հարշին Նախագիծ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնք, Սևան-Գավառ ավտոճանապարհի 5-րդ կմ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի ափամերձ հատվածում՝ «Նոյ Լենդ» ՓԲԸ-ին (սեփականության վկայականներ՝ 2160873, 2160881, 2160874) պատկանող հանգստի գոտու տարածքում, «Սևան» ազգային պարկի սահմաններում:

Հանգստի գոտու ընդհանուր հողատարածքը կազմում է 15 հա (2.5հա, 9.0հա և 3.5 հա), որից նախատեսվող գործունեության կառուցապատվող մակերեսը կազմում է 1,5 հա: Հողատարածքի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող է, գործառնական նշանակությունը՝ բնապահպանական:

Գործունեության նպատակն է՝ Սևանա լճի կենտրոնական գոտում 1905,0մ բացարձակ նիշից բարձր կառուցապատման համար նախատեսված տարածքում, բազմաֆունկցիոնալ հնարավորություններով հյուրանոցի և խոհանոցի կառուցում:

Հայցվող տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզում, փոքր Սևանի հարավ-արևմտյան ափին, Սևան քաղաքից 5 կմ հեռավորության վրա: Այն զբաղեցնում է «Սևան» ազգային պարկի ռեկրացիոն գոտու 2-րդ հատվածը, լճի ափից 1916մ բարձրության վրա: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է բնության, պատմամշակութային հուշարձաններից, արգելոցներից բավական մեծ հեռավորության վրա: Գործունեության տարածքի ռելիեֆը հիմնականում ալիքավոր է, պատված քարաժայռերով և փոքր թեքություններով: Տարածաշրջանի այս հատվածը հարուստ է կենսաբազմազանությամբ, ինչպես նաև Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական որոշ տեսակներով: Վերջիններս պահպանվել են չխախտված բնական տարածքներում, քարակույտերի և չինգիլների մոտ, իսկ որոշ թռչնատեսակներ և այլ ջրամերձ թռչուններ հանդիպում են բնակավայրերի և աղբավայրերի մոտ: Անտառային տնկարկները քիչ են:



Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է նախկինում գոյություն ունեցող կառուցապատված տարածքում, լճի ափից 40 և 30 մ հեռավորության վրա: Տարածքն ամբողջովին բարեկարգված է: Համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի տարածքի 80%-ը կանաչապատված է: Գործունեության տարածքում կան տեղանքին բնորոշ ծառատեսակներ (բարդի, ուռենի, եղևնի) և ծառաթփային բուսականություն: Կառուցված են 2 հարկանի ռեստորան, հանգստի համար նախատեսված 1-2 հարկանի տներ, տաղավարներ, անգար և այլ տնտեսական շինություններ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է կառուցել 2 շենք՝ 3 հարկանի 12 համարով հյուրանոց և 1 հարկանի խոհանոց, որը հնարավորություն կստեղծի հանգստացողների քանակն ավելացնել մինչև 145 մարդ: Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում օգտագործվելու են տեխնիկական միջոցներ՝ էքսկավատոր, կոունկ, բեռնատար մեքենա, ինքնաթափ, բետոնախառնիչ: Շինարարական աշխատանքները տևելու են 24 ամիս:

Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, բնառեսուրսներից ջուր՝ տարածքների ջրցանի, հողի (գրունտի) խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային և տնտեսական կարիքների համար (826.56 մ³/շին ժամ):

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի համար նախատեսված ջուրը բերվելու է համապատասխան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով:

Համաձայն նախնական հայտի շինարարության ընթացքում արտադրական հոսքաջրեր չեն առաջանալու: Տարածքում կոյուղու ցանցի բացակայության պատճառով առաջացող կենցաղային հոսքաջրերը ներքին ցանցով հավաքվելու և հեռացվելու են դեպի կոյուղու բակային ցանց, որը միացվելու է կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայաններին: Ներքին ցանցի միջոցով կոյուղու բակային ցանցին են միացվելու նաև շենքի տանիքից հեռացվող անձրևաջրերը:

Հանգստյան գոտու շրջակայքում կեղտաջրերի հեռացման և մաքրման կոլեկտորի բացակայության պատճառով տեղադրվելու են 2 կենսաբանական մաքրման կայաններ: Ըստ նախնական գնահատման հայտի կեղտաջրերի մաքրման և վնասազերծման համար տեղադրվելու են 2 հատ 32 մ³/օր ընդհանուր հզորությամբ <<ՅՈՒԲԱՍ 100>> կամ նմանատիպ ավելի լավ ցուցանիշներով մոդուլային կենսաբանական մաքրման կայաններ: Համաձայն անձնագրային և տեխնիկական ցուցանիշների՝ մաքրման կայանները համապատասխանելու են Սևանա լճի համար հաստատված և ձկնատնտեսական ջրամբարների համար նախատեսված նորմերին: Մաքրման կայաններում կեղտաջրերի վնասազերծումից հետո, մաքրված ջրերը կարող են օգտագործվել ոռոգման նպատակով: Կայանների բոլոր մասերը պատրաստված են չժանգոտվող կայուն նյութից՝ պոլիպրոպիլենից և ունեն մինչև 50 տարվա ծառայելիության ժամկետ: Համաձայն հայտի մաքրման կայանները համապատասխանելու են հանգստացողների առավելագույն թվաքանակին: Մաքրման կայանները տեղադրվելու են 1905 մ բացարձակ նիշից բարձր:

Շինարարության և շահագործման փուլերում առաջանալու են թափոններ՝ չտեսակավորված կենցաղային աղբ (70-80 կգ), որը տեղափոխվելու է աղբավայր: Շինարարական աղբը (80 մ³), պայմանագրային հիմունքներով ամբողջությամբ տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր: Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ կատարվելու է նաև 285մ³ հողային աշխատանքներ (հանույթ) և հետլիցք (130 մ³): Հանվող հողային զանգվածի 60մ³-ը հողաբուսաշերտ է, որը պահպանվելու է հատուկ նախատեսված վայրում՝ ծածկված վիճակում: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ավելացված հողային զանգվածը և հողի բերի շերտը օգտագործվելու են տարածքի բարեկարգման համար:



Համաձայն նախնական հայտի նախատեսվող հյուրանոցային և խոհանոցային մասնաշենքերը կառուցվելու են ծառերից ազատ տարածքներում՝ ծառահատում չի կատարվելու: Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է 300մ² մակերեսով տարածքի բարեկարգում:

Շահագործման փուլում՝ մարդկանց քանակի հնարավոր ավելացմամբ պայմանավորված հանգստի գոտին վերակահավորվելու է ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N1563-Ն որոշման տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխան: Ավելացվելու են հանդերձարան-խցիկների, տենտերների, հովանոցների, աղբանոթների (50 մարդու համար՝ 1 աղբանոթ) քանակները, ընդլայնվելու է լողափի գոտու մանկական հատվածը և այլն:

Ջրամատակարարումը կատարվելու է համայնքային ջրամատակարարման ցանցին միացված գոյություն ունեցող ջրատարից, «Վիոլա ջուր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի հիման վրա: Շահագործման փուլում նախատեսվում է սառը, տաք ջրամատակարարման, կենցաղային և հեղեղատար կոյուղու ցանցերի կառուցում՝ ՀՀ-ում գործող նորմերին համապատասխան: Սառը ջրի սնուցումը կատարվելու է բակում նախատեսված պոմպակայանից՝ պողպատե խողովակով: Տաք ջրամատակարարման համար շենքերում տեղադրվելու են երկկոնտուրանի կաթսաներ:

Նախատեսվող գործունեությունը կատարվելու է երկարամյա մարդածին ազդեցության գոտում, ինչը չի առաջացնի շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցություններ: Ազդեցությունները առաջանալու են կապված հողային աշխատանքների՝ փորման, բեռնման, բետոնային աշխատանքների, ջրամեկուսացման համար նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների հետ:

Գործունեության իրականացման արդյունքում լինելու են մթնոլորտային արտանետումներ՝ փոշու և շինարարական տեխնիկայի շահագործման արդյունքում դիզելային վառելիքից առաջացող գազերի տեսքով:

Նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ:

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցան,

- անձրևների ժամանակ առաջացած շինարարական հոսքաջրերի ուղղորդում 5մ³ ծավալով պարզարան,

- հողաբուսաշերտի պահպանում ՀՀ կառավարության 08.09.2011թ. թիվ 1396-Ն որոշման պահանջներին համապատասխան, բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը,

- հողի բերրի շերտի պահեստավորում, ծածկում, հողի մեկուսացում՝ եզերված պատնեշներով (բորոյուրներ), բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը,

- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնների պահեստավորում հատուկ նախատեսված վայրում՝ ծածկված վիճակում,

- շինհրապարակում ընդհանուր և կենցաղային աղբից թափոնների տարանջատում, տեղափոխում հատուկ հատկացված աղբավայր,

- հողային ռեսուրսների մեջ վառելիքի, քսայուղերի ներթափանցումը կանխելու նպատակով՝ շինարարական տեխնիկայի սպասարկման և կայանման վայրերում սնվող սարքերի կամ ավազի տեղադրում,



- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- օգտագործումից առաջ հեղուկ նյութերի տեղադրում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- շինարարության ընթացքում տեխնիկայի վառելիքի լիցքավորման և յուղման իրականացում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության, արտակարգ իրավիճակներին և շինարարությանն առնչվող նորմերի պահպանում, լուսավորության, երթևեկության կարգավորում և այլն:

Փորձաքննական եզրահանգումներ. Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության ստորաբաժանումները: Օրենսդրությամբ սահմանված կարգով Չկալովկա համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել: Գործունեության իրականացումը նպաստելու է բնակչության հանգստի պայմանների բարելավմանը:

Փորձաքննական պահանջներ

1. Գործունեությունն իրականացնել միայն կեղտաջրերի վնասագերծման համար հայտով նախատեսված համապատասխան կենսաբանական մաքրման կայանների տեղադրման դեպքում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցից միջոցառումներ՝ ուղղված Սևանա լճի ջրի մեջ վտանգավոր նյութերի ներթափանցման ռիսկերը նվազեցնելուն, լճի ջրի որակի և տարածքի սանիտարական նորմերի պահպանմանը:
3. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ապահովել «Սևան» ԱՊ-ի և դրան հարող տարածքներում կառուցապատման նորմերի (18.12. 2008 թ. 1563-Ն) և Սևանա լճի էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի օգտագործման (24.01.2002 թ. N 57) վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումների պահանջների կատարումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Նոյ Լենդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Չկալովկա համայնքի ափամերձ հանգստի գոտու տարածքում հյուրանոցի և խոհանոցային մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ Թ. Նուրիջանյան

